ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀՐԱՎԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի

2018 թվականի հոկտեմբերի 26-ի որոշմամբ հրապարակվում է

“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ ՍՄԿԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/25

Պատվիրատուն՝ «Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ-ը, որը գտնվում է ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Մ.Ստեփանյան 13 հասցեում, ստորև ներկայացնում է ՍՄԿԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/25 ծածկագրով հայտարարված ընթացակարգի հրավերի փոփոխության պատճառները և փոփոխությունների համառոտ նկարագրությունը :

Փոփոխության պատճառ : Տեխնիկական բնութագրում փոփոխություն կատարելը:

Փոփոխության նկարագրություն: Կից ներկայացվում է ՍՄԿԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/25 ծածկագրով ընթացակարգի տեխնիկական բնութագիրը՝ ֆիտոմենադիոն 2մգ/0,2մլ, ամպուլներ 0,2մլ և դեղաչափիչ սարք, լուծույթ ներարկման/ներ-քին ընդունման:Գնման ենթակա ապրանքների քանակները համարվում են առավելագույն մատակարարվող քանակներ՝ որոնք ըստ կարիքի կարող են նվազել: Եթե պայմանագրի գործողության ընթացքում Պատվիրատուի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջական խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է: Դեղերի պիտանիության ժամկետները գնորդին հանձնման պահին պետք է լինեն հետևյալը՝ ա. 2,5 տարվանից ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ, բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն երկու երրորդը, գ. առանձին դեպքերում, այն է՝ հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը, դեղի սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետները, դեղը հանձման պահին կարող է ունենալ դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն մեկ երկրորդը: դ.Գնման առարկայի պահպանումը և տեղափոխումն իրականացվում է համաձայն վերջիններիս արտաքին փաթեթի կամ ներդիր-թերթիկի ցուցումների:

Փոփոխության հիմնավորում: Պատվիրատուի կողմից սահմանված տեխնիկական բնութագրում փոփոխություններ կատարելու հիմքով:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ս.Գրիգորյանին:

Հեռախոս 0285 2 85 96
Էլ. փոստ kapanhospital@mail.ru
Պատվիրատու «Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ